Հովհաննես Թումանյան

Կույրերի կարծիքը

(Արևելքի առակներից)

Օրը ցերեկով
Երեք-չորս հոգով
Կույրերը եկան
Փղին դեմ ընկան:

Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,
Հե՛յ, զգո՛ւյշ, կանչեց, մի պատ կա էստեղ:
Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝
Ի՞նչ պատ, ծիծաղեց, էս կոճղ է կարծեմ:
Երրորդի ձեռը կընճիթն էր ընկել.

Օձ է, օ՛ձ, գոռաց, էլ ի՞նչ եք կանգնել:
Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած
Քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.
Վա՞հ, ճիշտ որ կույր եք. չիմացավ ոչ ոք:
Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ:

Չէ՛, պատ է, չէ, կոճղ չէ, օձ է, չէ, թոկ...
Ու աղմկելով ամեն մինը ջոկ,
Ինչպես որ եկել
Դեմ էին ընկել,
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կըրկին

Սարի պես փիղը պարզ լուսի տակին:

1909